*Տպագրված է ընդամենը 5 օրինակ*
*Օրինակ 4*

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ հոգաբարձուների խորհրդի

«23» սեպտեմբերի 2008թ. որոշմամբ

Գործադիր տնօրենի
պարտականությունները կատարող՝

_____________ Արա Վարդանյան

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀՀ արդարադատության նախարարի
«25»մայիսի 1999թ. թիվ 828 հրամանով

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում
«25» նոյեմբերի 2003թ.
Գրանցման թիվ 222.160.00232
Վկայական 03 Ա 061794

Թիվ 001.3 փոփոխությունը գրանցվել է
«26» ապրիլի 2006 թ.
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից:

Թիվ 002.2 փոփոխությունը գրանցվել է
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից:
«11» փետրվարի 2009 թ.

ՀՀ իրավաբանական անձանց Պետական ռեգիստրի ղեկավար՝

Ա.Գևորգյան (________________)

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
**նոր խմբագրությամբ**

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը, (այսուհետ՝ հիմնադրամ) անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, բարեսիրական, ոչ քաղաքական բնույթի կազմակերպություն է, որը հետապնդում է բարեգործական, սոցիալական, տնտեսական, գիտական, կրթական, մշակութային, առողջապահական և այլ հանրօգուտ նպատակներ:
2. Հիմնադրամը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության (այսուհետև՝ Օրենսդրություն) համաձայն: Իր գործունեության ընթացքում Հիմնադրամը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի որոշումներով, իսկ նրա սահմաններից դուրս՝ տվյալ պետության օրենսդրությամբ:
3. Հիմնադրամի գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, իրավահավասարությունը, կամավորությունը, ինքնաֆինանսավորումը, ինքնակառավարումը, մարդասիրությունը և հրապարակայնությունը:
4. Հիմնադրամի սույն կանոնադրությամբ սահմանված իրավունքները գործում են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքում:
5. Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս ՀՀ նախագահը:
6. Հիմնադրամի անվանումն է՝

   հայերեն լրիվ՝ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամ,

   հայերեն հապավում՝ ՀՀՀ,

   անգլերեն լրիվ "Hayastan" All-Armenian Fund

   անգլերեն հապավում՝ HAAF.
7. Հիմնադրամի շահառուներն են Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և սփյուռքաշատ այլ երկրների բնակչությունը:
8. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Կառավարական 3-րդ մասնաշենք:
9. Հիմնադրամի գործունեության ժամկետը՝ անժամկետ:

## II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. Հիմնադրամի գործունեության նպատակներն ու խնդիրներն են.

    ա) ա) օժանդակել Հայաստանի և այլ երկրների սոցիալ-տնտեսական զարգացմանը ու բարեփոխումների իրականացմանը,

    բ) նպաստել գիտական, կրթական, մշակութային, սոցիալական և առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը,

    գ) աջակցել մեծ կարևորություն ունեցող բարեգործական ծրագրերի իրականացմանը,

    դ) տրամադրել դրամական և բնամթերային օգնություն ֆիզիկական և իրավաբանական անձանց,

    ե) զբաղվել ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեությամբ:

## III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Հիմնադրամը իր պետական գրանցման պահից ձեռք է բերել իրավաբանական անձի կարգավիճակ:
12. Հիմնադրամն օգտվում է իրավաբանական անձի համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից և կրում համապատասխան պարտականություններ:
13. Հիմնադրամն՝

    ա) ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների բանկերում հաշվարկային ու այլ հաշիվներ,

    բ) իր անվանմամբ և Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված այլ նշաններ,

    գ) ունի խորհրդանիշ՝ ՀՀ եռագույն երկու դրոշների համադրումից ստացված հավերժության նշանի պատկերով՝

14. Հիմնադրամն իր անունից կարող է ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:
15. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
16. Հիմնադրամը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար և դրանց համապատասխան:
17. Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:
18. Հիմնադրամն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

    ա) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.

    բ) հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.

    գ) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

    դ) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.

    ե) Հիմնադրամի կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ, հաստատել նոր խմբագրությամբ կանոնադրություն,

գ) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

19. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

20. Հիմնադրամը պարտավոր է՝

ա) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան.

բ) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,

գ) օրենքով սահմանված կարգով հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև աուդիտորի եզրակացություն,

դ) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ:

21. Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների, իսկ հիմնադիրը՝ հիմնադրամի պարտավորությունների համար:

## IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

22. Հիմնադրի՝ հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է:

23. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող ու իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցներն իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան:

24. Հիմնադրամը կարող է որպես սեփականություն ունենալ սեփականության իրավունքի՝ օրենքով չարգելված ցանկացած օբյեկտ, այդ թվում անշարժ և շարժական գույք, դրամական միջոցներ՝ դրամով, արտարժույթով և այլն:

25. Հիմնադրամի գույքի՝ ներառյալ ֆինանսական միջոցները, գոյացման աղբյուրներն են՝

ա) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,

բ) դրամաշնորհները,

գ) դրամական մուտքերը պետական բյուջեից,

դ) հանգանակություններից, բարեգործական վիճակախաղերից և այլ միջոցառումներից ստացված եկամուտները,

ե) օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները,

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

26. Հիմնադրամի գույքը՝ ներառյալ ֆինանսական միջոցները ձևավորվում են կամավոր հիմունքներով և կարող են ունենալ պարբերական հատկացման, միանվագ նվիրատվության, ժառանգման, անանուն փոխանցման և այլ ձևեր:

27. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ հիմնադրամի հիմնադիրը, հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև հիմնադրամի աշխատողները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:
28. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա բանկերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բացել հաշվարկային և այլ հաշիվներ (այդ թվում՝ արտարժութային), ինչպես նաև նպատակային ենթահաշիվներ՝ որոշակի ծրագրեր իրականացնելու համար:
29. Պետական բյուջեի միջոցները կարող են ուղղվել Հիմնադրամի կողից իրականացվող գործունեության աջակցմանը միայն մրցութային սկզբունքով և միայն այն դեպքում, եթե Հիմնադրամի գործունեության ծրագիրը սահմանված կարգով որակված է հանրօգուտ կամ բարեգործական:
30. Հիմնադրամի ծախսերն են.
    ա) կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը,
    բ) վարչակառավարչական ծախսերը, որոնց չափը սահմանվում է հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

## V. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

31. Հիմնադրամի մարմիններն են Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետև տեքստում՝ Խորհուրդ), հիմնադրամի գործադիր վարչությունը և հիմնադրամի Գործադիր տնօրենը (այսուհետև տեքստում՝ Գործադիր տնօրեն): Հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի կազմում գործում են հոգաբարձուների խորհրդի նախագահությունը (այսուհետև տեքստում՝ Խորհրդի նախագահություն) և Վերստուգիչ հանձնաժողովը:
32. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է: Խորհուրդը բաղկացած է 35 անդամներից:
33. Խորհրդի անհատական կազմը սահմանում, Խորհրդի անդամներին ընտրում է հիմնադիրը: Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումներն ընդունում է հիմնադիրը:
    Հայաստանի Հանրապետության Նախագահը ի պաշտոնե հանդիսանում է խորհրդի նախագահը, իսկ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահը՝ խորհրդի փոխնախագահը: Ի պաշտոնե խորհրդի անդամներ են հանդիսանում.
    ա) ՀՀ Ազգային ժողովի նախագահը,
    բ) ՀՀ վարչապետը,
    գ) ՀՀ Արտաքին գործերի նախարարը,
    դ) ՀՀ Ֆինանսների նախարարը,
    ե) ՀՀ Կենտրոնական բանկի նախագահը,
    զ) ԼՂՀ նախագահը,
    է) ԼՂՀ վարչապետը,
    ը) Ամենայն Հայոց Կաթողիկոսը,

թ) Մեծի տանն Կիլիկիո Կաթողիկոսը,

ժ) Հայ Կաթոլիկե եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարքը:

Վերոնշյալ անձանց լիազորությունները համարվում են դադարած նրանց զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրանց զբաղեցրած պաշտոնի վերացման մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

Խորհրդի անդամներ են հանդիսանում.

ա) Հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչը,

բ) Ռամկավար ազատական կուսակցության ներկայացուցիչը,

գ) Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչը,

դ) Ս.Դ. Հնչակյան կուսակցության ներկայացուցիչը,

ե) Ամերիկայի հայկական համագումարի ներկայացուցիչը,

զ) Հայ բարեգործական ընդհանուր միության ներկայացուցիչը,

է) Հայ օգնության միության ներկայացուցիչը,

ը) Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության ներկայացուցիչը:

Խորհրդի անդամ կարող են լինել նաև այլ հեղինակավոր կազմակերպությունների ներկայացուցիչները և անձինք:

34. Հիմնադրամի Խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

35. Խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է նիստերի միջոցով:

Խորհրդի նիստերը գումարվում են պարբերաբար՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան մեկ տարին մեկ անգամ Խորհրդի նախագահի կողմից:

Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում:

Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

36. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

Խորհրդի որոշումներն ընդունվում են փոխհամաձայնության սկզբունքով կամ քվեարկությամբ՝ նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

Հիմնադրամի գործադիր տնօրենի, փոխտնօրենների նշանակման և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

37. Եթե խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի գույքային և այլ շահերին վերաբերող հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

38. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

ա) Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.

բ) Հիմնադրամի ծրագրային ուղղությունների և առաջնահերթությունների հաստատումը.

գ) ներկազմակերպական խնդիրների վերաբերյալ որոշումների ընդունումը,

դ) Հիմնադրամի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

ե) Հիմնադրամի բյուջեի, դրանում կատարվող փոփոխությունների և վարչակառավարչական ծախսերի չափի, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի ծրագրային տարեկան հաշվետվությունների հաստատումը,

զ) Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,

է) Հիմնադրամի վերակազմակերպման մասին և հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշումների ընդունումը,

ը) Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,

թ) Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովի անդամների և Խորհրդի նախագահության անդամների ընտրությունների և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների, ինչպես նաև Հիմնադրամի Գործադիր տնօրենի և փոխտնօրենների Խորհրդի նախագահության կողմից կատարված նշանակումների և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների հաստատումը,

ժ) Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումների ընդունումը,

ի) Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգի, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքի ու հաստիքացուցակի հաստատման, տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,

լ) Խորհրդի պատվավոր անդամի կոչում շնորհելու մասին որոշումների ընդունումը,

խ) Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,

ծ) Գործադիր վարչության և վերստուգիչ հանձնաժողովի ծրագրային ու ֆինանսական հաշվետվությունների լսումը,

կ) Գործադիր վարչության և տեղական մարմինների միջև կնքվող պայմանագրի ձևի հաստատումը,

հ) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,

ձ) Հիմնադրամի աուդիտ իրականացնող իրավաբանական անձի ընտրությունը,

ղ) սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

39. Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

40. Խորհրդի անդամն իրավունք ունի.

ա) Գործադիր վարչությունից պահանջել և ստանալ ծրագրային կամ ֆինանսական գործունեությանը վերաբերող ցանկացած փաստաթուղթ,

բ) Խորհրդի հաստատած պարբերականությամբ ստանալ տեղեկություններ և հետևել Խորհրդի որոշումների կատարման ընթացքին,

գ) հանդես գալ նախաձեռնությամբ և առաջարկներով,

դ) ստանալ իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

41. Խորհրդի անդամը պարտավոր է.

ա) մասնակցել հիմնադրամի Խորհրդի նիստերին.

բ) ամեն կերպ աջակցել Հիմնադրամի ծրագրային, քարոզչական և այլ տիպի գործունեությանը:

42. Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

բ) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

դ) իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

43. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է խորհրդի փոխնախագահը կամ խորհրդի անդամներից մեկը:

44. Հիմնադրամի գործունեությանը և միջոցների հավաքագրման գործին մեծ նպաստ բերած անձանց, հիմնադրամի խորհրդի որոշմամբ, կարող է շնորհվել խորհրդի պատվավոր անդամի կոչում: Խորհրդի պատվավոր անդամները իրավունք ունեն խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել խորհրդի նիստերին:

45. Հիմնադրամի Խորհրդի նախագահությունը.

ա) Բաղկացած է տասնմեկ անդամներից (առնվազն հինգը սփյուռքից, մեկը Արցախից), ընտրվում է Խորհրդի կողմից հինգ տարի ժամկետով, վերընտրվելու իրավունքով, նիստերի միջև ընկած ժամանակահատվածում հրատապ հարցերի լուծման համար, ինչպես նաև Խորհրդի իրավասության (բացի բացառիկ իրավասություններից՝ Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումների ընդունումը, վերստուգիչ հանձնաժողովի ընտրումը և հանձնաժողովի անդամների իրավասությունների վաղաժամկետ դադարեցումը և Հիմնադրամի վերակազմակերպման ու լուծարման մասին որոշման ընդունումը) հարցերին ժամանակավոր լուծում (մինչև առաջիկա Խորհրդի նիստը) տալու համար: Առանձին դեպքերում կարող է հարցման կարգով դիմել Խորհրդի բոլոր անդամներին՝ ստանալու համար վերջիններիս համաձայնությունը:

բ) Իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով: Խորհրդի Նախագահության նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են նրա անդամների կեսից ավելին: Խորհրդի նախագահության որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկել նիստի մասնակիցների երկու երրորդը, այդ թվում՝ Սփյուռքի ներկայացուցիչներից առնվազն երկուսը:

գ) Ընդունում է Հիմնադրամի բյուջեն ու ներկայացնում Խորհրդի հաստատմանը:

դ) Նշանակում է Հիմնադրամի Գործադիր տնօրեն, փոխտնօրեններ և ներկայացնում Խորհրդի հաստատմանը:

ե) Հիմնադրամի Խորհրդի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Խորհրդի նախագահության նախագահը:

46. Հիմնադրամի կենտրոնական գործադիր մարմինը Գործադիր վարչությունն է, որը հաշվետու է Հիմնադրամի Խորհրդին և Խորհրդի նախագահությանը:

47. Գործադիր վարչությունն իրավունք ունի.

ա) իրականացնել Հիմնադրամի ծրագրային գործունեությունը,

բ) վերահսկել ծրագրերի իրականացման ընթացքը,

գ) համակարգել տեղական մարմինների գործունեությունը,

դ) կազմակերպել քարոզչական արշավներ, միջոցառումներ Հայաստանում և Հայաստանի սահմաններից դուրս՝ գործակցելով տեղական մարմինների հետ,

ե) կատարել տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների այդ թվում սփյուռքահայ ներկայացուցչական մարմինների համագործակցությամբ տեղական մարմինների, ինչպես նաև հիմնարկների ստեղծման և դրանց ղեկավարներին Խորհրդի կողմից սահմանված ընթացակարգերով նշանակման ու պաշտոնից ազատման մասին Խորհրդի կողմից ընդունված որոշումները:

48. Գործադիր վարչությունը պարտավոր է.

ա) աշխատանք կատարել Ազգային Նվիրատվության գաղափարը Հայաստանում և սփյուռքում արմատավորելու, Խորհրդի հաստատած ծրագրերի համար ֆինանսավորման աղբյուրներ գտնելու ուղղությամբ,

բ) ըստ նպատակի և խնայողաբար օգտագործել Հիմնադրամի միջոցները,

գ) հետևել ծրագրերի իրականացման որակին, ժամկետներին և գրաֆիկին,

ա) Խորհրդին և Խորհրդի նախագահությանը ներկայացնել հաշվետվություն ծրագրերի ընթացքի և ֆինանսական վիճակի մասին,

դ) լուսաբանել Հիմնադրամի գործունեությունը Հայաստանում և Հայաստանի սահմաններից դուրս՝ գործակցելով տեղական մարմինների հետ,

ե) Ազգային Նվիրատվության վավերագրեր տալ Ազգային Նվիրատվություն կատարող բոլոր անհատներին ու կազմակերպություններին՝ անկախ հատկացված գումարի չափից,

գ) տրամադրել տեղական մարմիններին աշխատանքի և քարոզչության համար անհրաժեշտ նյութեր:

49. Հիմնադրամի Գործադիր վարչության ամենօրյա աշխատանքների ղեկավարումն իրականացնում է Գործադիր տնօրենը:

50. Գործադիր տնօրենը կազմակերպում է Խորհրդի և Խորհրդի նախագահության որոշումների կատարումը:

51. Գործադիր տնօրենը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվում է երեք տարի ժամկետով:

52. Գործադիր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ և նրա հետ երեք տարի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով: Հիմնադրի անունից աշխատանքային պայմանագիրն ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի լիազորած այլ անձ:

53. Հիմնադրամի Գործադիր տնօրենը՝

ա) տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից,

բ) ներկայացնում է հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

գ) գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,

դ) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

ե) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

զ) խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքն ու հաստիքացուցակը,

է) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ը) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին.

թ) աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ժ) նշանակման և հաստատման համար ներկայացնում է փոխտնօրենների թեկնածությունները:

54. Գործադիր տնօրենն այլ կազմակերպությունում կարող է այլ վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:

55. Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու Գործադիր տնօրենի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով:

56. Հիմնադրամի ֆինանսական գործունեությունը վերահսկում է Վերստուգիչ հանձնաժողովը: Վերստուգիչ հանձնաժողովի կազմը (թվով 2 անձ, որոնցից մեկը Սփյուռքից) ընտրվում է Խորհրդի կողմից հինգ տարի ժամանակով, իսկ մյուսը ի պաշտոնե հանդիսանում է ՀՀ հարկային մարմնի ղեկավարը: Վերստուգիչ հանձնաժողովի անդամները հաշվետու են Խորհրդին:

57. Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է Հիմնադրամի ֆինանսական և մյուս փաստաթղթերը, այդ թվում հաշվեկշիռը, հետևում է գույքի պահպանմանը և Հիմնադրամի ղեկավար մարմինների որոշումների կատարմանը:

58. Վերստուգիչ հանձնաժողովը կարող է ցանկացած փվյալներ և հաշվետվություն պահանջել ղեկավարներից և այլ աշխատակիցներից:
59. Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է պարեկան հաշվետվություն ներկայացնել Հիմնադրամի գործունեության արդյունքների, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ փվյալների մասին: Վերստուգիչ հանձնաժողովը որոշումներ ընդունում է միաձայն (հանձնաժողովի բոլոր անդամների կողմ քվեարկելու դեպքում):
60. Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Հիմնադրամի Գործադիր վարչության անդամները և Գործադիր տնօրենը:
61. Սփյուռքահայ համայնքներում Հիմնադրամն իր գործունեությունը կազմակերպում է տվյալ երկրի օրենքներով ստեղծված մարմինների միջոցով, որոնց ամենօրյա ընթացիկ աշխատանքներն իրականացվում են տեղական գրասենյակների միջոցով:
62. Հիմնադրամի տեղական մարմին համարվում է ներկայացուցչական այն մարմինը, որն ընդունում է Հիմնադրամի կանոնադրությունը և ղեկավարվում է Հիմնադրամի Խորհրդի և Գործադիր վարչության որոշումներով:
63. Տեղական մարմին ստեղծվում է ներկայացուցչական և առաջադրման սկզբունքով՝ տեղի հայկական կազմակերպությունների և եկեղեցիների ներկայացուցիչների, ինչպես նաև անհատների մասնակցությամբ՝ Հիմնադրամի որոշումներին համապատասխան.

    ա) տեղական մարմին ստեղծվում է Հիմնադրամի Գործադիր տնօրենի կամ նրա կողմից լիազորված անձի ներկայությամբ,

    բ) գրասենյակի տնօրենը նշանակվում է տեղական մարմինների կողմից Հիմնադրամի Գործադիր տնօրենի հետ խորհրդակցելուց հետո,

    գ) տեղական մարմինների և գրասենյակների գործունեությունը համակարգվում է Գործադիր վարչության կողմից, որն անկախ է և գործում է ոչ կուսակցական սկզբունքներից ելնելով:
64. Տեղական մարմինը.

    ա) ներկայացնում է Հիմնադրամը տվյալ համայնքում, համաձայն Հիմնադրամի Խորհրդի որոշումների քննարկում և հաստատում է ամենամյա գործունեության ծրագիր,

    բ) Հիմնադրամի Խորհրդի հաստատած պարբերականությամբ հաշվետվություն է ներկայացնում Գործադիր վարչությանը:
65. Տեղական մարմինն իրավասու է.

    ա) ներկայացնելու Հիմնադրամը տվյալ երկրում, ինչպես նաև երկրի բարձրագույն ատյանների առաջ,

    բ) կնքելու պայմանագրեր տվյալ երկրի կառավարական, ոչ կառավարական, բարեգործական և մարդասիրական կազմակերպությունների, ինչպես նաև անհատների հետ՝ սույն կանոնադրությանը չհակասող գործունեություն իրականացնելու համար,

    գ) հանդես գալու նախաձեռնությամբ և առաջարկություններով:
66. Հիմնադրամի մարմինների նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են՝

    ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,

բ) նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում՝ կառավարման մարմնի անդամների) քանակը.

գ) նիստին մասնակցած անձանց (այդ թվում՝ կառավարման մարմնի անդամների) քանակը, անունները՝ նշելով հիմնադրամում զբաղեցրած պաշտոնը,

դ) նիստի օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քննարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քննարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները:

67. Հիմնադրամի մարմինների նիստերի արձանագրությունները կազմվում են հայերենով: Դրանք կարող են կազմվել նաև օտար լեզվով: Տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:

## VI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

68. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով: Վերակազմակերպումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով՝ ինչպես Հիմնադրամի հիմնադրի, այնպես էլ Հիմնադրամի Խորհրդի որոշմամբ:
69. Հիմնադրամը կարող է լուծարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
70. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: